

ՆՈՐ ԱՎԵԾԱՊԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԿ., 23 ՆՈՅ., 1929

ԹԻԻ 22

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

ԱՂԱՆԴՆԵՐԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՏԱՐՍՈՆԻ ՄԷՋ ՍԲ: ՊՕՂՈՍ ԴՈՒԷՃ

ՎԵՐ. Ս. ՄԵԼԳՈՆԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

ՊԱՏ. Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

ՍԲ. ՎՐԹԱՆԷՍ ՊԱՐԹԵԻ

ՌՇՏՈՒՆԻ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ «ԳՈՒԷՃ» ՀԱՆԿ.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, կրթական գիտական պարբերական

Տէր և Տնօրէն

Վեր. Կ. Յ. Յարութիւնեան

Պատասխանատու խմբագիր

Տ. Ճ. Խրլորեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

Սուրբա, տարեկան 1.50 Սուրբական օսկի:

Արտասահման, տարեկան 1.50 տոլար:

Բ Ա Յ Ո Ւ Ա Ծ Է

«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»-Ի Գ. ՏԱՐՈՒԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

ՎԵՑ ԱՄՍՈՒԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Զ'ԸՆԴՈՒՆՈՒՐ.

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ՆՈՒՆԻ ՄԸ ԸՆՏԱՆԻՔԻԴ

ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒԴ:

ԿԱՐԵՒՈՐ

Կը խնդրուի մեր յարգոյ բաժանորդներէն, որոնք տակաւին իրենց հաշիւը մաքրած չեն, որ փութով իրենց բաժանորդները վճարեն:

Հալէպի բաժանորդները թող հաճին վճարել Ազիզիէի եկեղեցիին ժամկոչին, Պր. Մանուէլ Պօղօղլանեանի, ընկալադրի փոխարէն:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Յօդուածները գրել մեկնով

2. Թուղթին մէկ էջին վրայ

3. մաքուր եւ գիւրընթեռնելի

Հակառակ պարագային յօդուածնէսը կը մնան անհրատարակելի:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

Դեկտեմբեր 1

ԲՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ՆԵՐԿԱՅ

ԴԱՐՈՒՄ ՄԷՋ

Դաս—Դուկ. 2. 40-52:

Դեկտեմբեր 8

ՕԳՆԵԼ ԿԱՐՕՏ ՀԱՐԵՒԱՆՆԵՐՈՒՆ

Դաս—Մատթ. 25. 31-46:

Դեկտեմբեր 15

ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈԳԻՆ ԳՈՐԾԻ ՄԷՋ

Դաս—Բ. Օր. 24. 14-15: Եփս. 6. 5-9: Ա. Տիմ. 6. 17-19:

Դեկտեմբեր 22

ՄԱՆՈՒԿԸ ԲՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

(Ծնունդի դաս)

Դաս—Դուկ. 2. 8-20:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԻՊ, 23 ՆՈՅ., 1929

ԹԻԻ 22

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՂԱՆԴՆԵՐԸ

Աղանդ, հերձուածողութիւն և հե-
րետիկոսութիւն բառերը տարրեր զա-
ղափարներ կը պարունակեն իրենց մէջ,
բայց սովորաբար և հաւասար կերպով
կը գործածուին մայր կրօնական հաս-
տատութեան մը ուէ լաժանուծին հա-
մար, որ կրնայ կազմակերպական, դա-
ւանական կամ գործնական կեանքի վե-
րաբերեալ պատճառներ ունենալ: Ա-
սոնք ուղղափառ չեն նկատուիր:

Քրիստոնեայ Եկեղեցին իր գոյու-
թեան սկիզբէն ի վեր բազմազան բաժա-
նուծներ ունեցած է, հակառակ կատար-
ուած բուռն ճիգերու ան երբեք չէ կըր-
ցած ցուցնել կազմակերպական միու-
թիւն մը, դաւանական նոյնութիւն մը,
վարք ու բարքի միօրինակութիւն մը:
Հայ Եկեղեցին այս ընդհանուր կանոնին
բացառութիւն մը չէ կազմած, շատ կա-
նուխէն անոր ծոցին մէջ կրօնական
տարբեր խմորութիւններ, խմբակցութիւն-
ներ, հերձուածքներ սկսած են գոյու-
թիւն ունենալ: Ուսումնասիրութեան
արժանի շատ հետաքրքրական հարցեր
են թէ ի՞նչ էր նախալուսաւորչեան քը-
րիստոնէութեան դաւանանքը, կազմա-
կերպական ձևը, թէ ե՞րբ սկսաւ հելլե-
նական քրիստոնէութեան ազդեցութիւ-
նը Հայաստանի մէջ, թէ մանաւանդ
ի՞նչպիսի իրարու հետ փոխյարաբերու-
թիւններ և իրարու վրայ փոխազդեցու-
թիւններ ունեցան յետլուսաւորչեան և
նախալուսաւորչեան քրիստոնէութիւն-
ները, թէ Հայ Եկեղեցին արդի՞ւնք է
մէկուն միւսին մէջ ձուլուելուն, թէ եր-

կուքին մէկ խառնուրդին, թէ Հայ ա-
ղանդները ե՞րբ և ի՞նչպէս ծագում ա-
ռին, և այլն: Բայց սաչափը ստոյգ
պէտք է նկատել թէ մինչեւ հիմա Հայ
Քրիստոնեայ Եկեղեցին իր մէջ և իրմէ
դուրս ունեցած է կազմակերպակ կամ
անկազմակերպ հատուածներ, իրենց ու-
րոյն դաւանանքներովն ու վարք ու
բարքովը:

Հայ Աւետ. Եկեղեցին, ԺԹ. դարուն
աւաջին կէսին հազիւ ծագում առած,
իր կարգին կանուխէն ցուցուցած է գա-
ղափարի շերտաւորութիւններ, որոնք սա-
կայն իրր կազմակերպակ ուրոյն հաւա-
նուածներ մարմին չեն առած: Բայց
Հայ Աւետարանականութիւնը իր ներ-
կայ բախտորոշ շրջանին մէջ բաւական
փափուկ վիճակ մը կը ներկայացնէ, եր-
կունքի պահեր կ'ապրի, որուն իրր ար-
գիւնք ան կրնայ անակնկալներու ծը-
նունդ տալ: Այսպիսի կացութեան մը
առջեւ պէտք ենք նկատի առնել,—

1. Թէ դաւանական, գաղափարա-
յին միութիւն մը անկարելի է հաստա-
տել, բառին բացարձակ առումովը:
Նոյնիսկ կաթոլիկ Եկեղեցին առ երե-
ւոյթս թէպէտ դաւանական միօրինա-
կութիւն կը ցուցնէ, բայց էականին մէջ
կազմակերպական միութիւն մըն է ան
և հաւատարմօրէն որդեգրած է Հռով-
մէական Կայսրութեան «պանազանու-
թեան մէջ միութիւն» սկզբունքը, իրա-
մակերպական գեանի վրայ, որուն մէջ
կը գտնուի անոր վերագոյն արժէքը:

2. Թէ բացարձակապէս հակաքրիս-

տոնէական և հակամարդկային արարք մըն է տարբեր եկեղեցիներուն և նոյն եկեղեցիին տարբեր հատուածներուն զիրար վարկաբեկումը, իրարու վրայ մուր քսելը, իրր թէ ուղղափառութիւնը վտանգէ ազատելու, բարեկարգելու կամ թերութիւնները ցոյց տալու դիտաւորութեամբ: Իրարու հանդէպ այսպիսի վերաբերում մը Քրիստոնեայ եկեղեցին միշտ տկարացուցած է և զայն արգիլած է իր գերագոյն պատգամը մարդկութեան տալէ, փոխանակ սիրոյ ատելութիւն արծարծելով սիրտերու մէջ:

3. Թէ քրիստոնէական միութիւնը կարելի է իրականացնել անորնպատակին շուրջ, որոշ չափով կազմակերպական իսկ երբեք դաւանական մարզին մէջ: Եթէ բոլոր եկեղեցիները նոյն Քրիստոսի ոգիով տոգորուած ըլլային և նոյն նպատակով գործի մղուած՝ անոնք հիմայ բոլորովին տարբեր վիճակ մը պիտի ներկայացնէին: Եթէ բոլոր եկեղեցիները, յարանուանութիւնները, հաւուածները, փոխանակ մենատիրական ձգտումներ, փառատենչիկ միտումներ, ինքնահաւան հովիւր ցուցնելու Քրիստոսի փրկութիւնը քարոզէին, տառապող աշխարհը, մեղքի տակ հեծով թըռուած մարդկութիւնը Քրիստոսի առաջնորդէին, իրական միութիւնը արգէն գոյութիւն ունեցած կ'ըլլար: Քրիստոսով լեցուած անհատներու և եկեղեցիներու մէջ տեսնուած դաւանանքի, զապիարի, ձեւի զանազանութիւնները

օգտակար և երբեմն անհրաժեշտ տարբեր են աւելի քան թէ արգելք քրիստոնէական միութեան:

4. Թէ լւրաքանչիւր հատուածի, բաժանումի մէջ փոխանակ միշտ միայն տեսնական, փառասիրական ստորին միտումներ տեսնելու, պէտք է զիտնուել ջանալ թէ ի՞նչ է այն բանը զոր հոգինը կը գտնեն այդ նոր եկեղեցիին, հատուածին, կազմակերպութեան մէջ և հետեւաբար կը գոհանան, բայց զոր չեն կրնար գտնել իրենց մայր եկեղեցիին, կամ կազմակերպութեան մէջ: Եւ այդ գոհացում պատճառող տարրը, օրուան պէտքը, գտնելէ վերջ անհրաժեշտ է աշխատիլ զայն հայթայթելու մայր հաւատութեան մէջ:

Հետեւաբար Հայ Աւետ. Եկեղեցին կրնայ հետեւեալ հարցումները նկատի առնել:

1. Ի՞նչ է եկեղեցիին նպատակը, ինչպէս մարդկութեան փրկութիւնը և զարգացումը սրբանալու մէջ՝ թէ ուրիշ բան:

2. Եթէ նպատակը այս է սրբաժոյճը՝ ջողած է կամ ձախողած է անոր իրազօրծումին մէջ:

3. Եթէ պէտք եղած չափով չէ յաջողած կամ ձախողած է, ի՞նչ են անոր պատճառները, և ի՞նչ միջոցներու պէտք է դիմել նպատակին իրագործումին համար:

Մենք կը խորհինք թէ Հայ Աւետ. Եկեղեցին ուժգին թափով պէտք է արթննայ իր նպատակին զրտակցութեան:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՏԱՐՍՈՆԻ ՍԷՋ “ՍԲ. ՊՕՂՈՍ ԳՈԼԷՃ”Ը

«Նոր Աւետարներ»ի յարգելի խմբագրին առաջարկով հարկ տեսնուեցաւ այս Գոլէճի մասին ամփոփ տեղեկութիւն տալ: 1688ին հաստատուած է այս

դպրոցը, որ իր գոյութեան առաջին հինգ տարիներուն մէջ ծանօթ եղած է «Ճենանեան Դպրոց» անունով իսկ անկէ վերջը մինչև 1919 «Քրիսթի Դպրոց»:

րոջը» յորջորջումով: Այս տողերը գր-
րողը Գոլէճի հաստատութեան թուակա-
նին ընդունուող առաջին աշակերտնե-
րէն և 1893ին ութը ուսումնաւարանի է-
մէկն է: Այս ութը ուսումնաւարանե-
րէն մէկը Ամերիկայի մէջ իր ուսումն-
դական կեանքի միջոցին մեռած է: Ու-
րիշ մը, Սամուէլ Սէֆէրեան, 1888ի
չարդի միջոցին Մարաշի Աստուածարա-
նական ձեմարանին մէջ նախապետե-
ցաւ: (Ասոր կրտսերացոյն հղբայրն է
Արքահամ Սէֆէրեան, որ «Մարանա-
թա»յի խմբագիրներէն է:) Ասոնց մէ-
ջորսը կրօնական պաշտօնեաներ (երեքը
Ամերիկա, մէկը Եգիպտոս), մէկը Կիպ-
րոսի մէջ բժիշկ, մէկ ուրիշը Ամերիկա-
յի մէջ ճարտարագէտ է:

Դպրոցին հիմնարկումին մէջ պէտք
չէ երբեք ուրանալ անխոնջ ջանքերն ու
անձնուիրումը Վեր. Յարութիւն ձե-
նանեանի, որուն հնգամեայ նախագա-
դահութեան միջոցին էր որ Ամերիկացի
նշանաւոր հարուստ գնդապետ Շէֆերտ,
100,000 տոլար նուիրեց Գոլէճին. այս գը-
րամին շնորհիւ էր որ հաստատութիւնը
կրցաւ իր գոյութիւնը պահել:

1888ին Վեր. ձենանեան ներկայիս
Իզմիրի մէջ Ինթըրնէշնէլ Գոլէճի նա-
խագահ Տր. Մէքլախլընի ընկերակցու-
թեամբ Ամերիկայէն Տարսոն վերադար-
ձաւ, և 12-14 աշակերտներով դպրոցը
բացին: Բայց առաջին տարուան մի-
ջոցին այս երկուքին միջեւ ծագած ան-
համաձայնութեան պատճառաւ Մր.
Մէքլախլըն իր Տարսոնի պաշտօնէն հը-
րաժարեցաւ և Իզմիր երթալով ձեռնար-
կեց Միջազգային Գոլէճի հաստատու-
թեան: Գոլէճի Ամերիկա գտնուող խը-
նամակալութիւնը, Մր. Մարթինը և Տր.
Հէմլըթընը ընտանեօք Տարսոն զրկեց
Վեր. ձենանեանի ընկերանալու համար:
Դժբաղդաբար նոր համաձայնութիւններ
ծագելով Գոլէճէ ասոնք եւս բաժնուե-
ցան, որոնցմէ Մր. Մարթին Հաճըն գը-

նաց, ուր իր ջանքերուն շնորհիւ հաս-
տատուեւ և Եկադեմիան: Իսկ Տր. Հէ-
մլըթըն Ամերիկա վերադարձաւ: Այս
բաժնուող երկու Ամերիկացիներու տեղ
1893ին Տարսոնի Գոլէճը զրկուեցան Տր.
Քրիսթի և Մր. Մէքլիթրիք* որոնցմէ ա-
ռաջինը իբր նախագահ բացարձակ իրա-
ւասութեամբ եկած էր: Գլխի տարի
մը ետքը Տր. Քրիսթի և Վեր. Յ. ձե-
նանեանի մի և ծագած դժուարութիւն-
ներու պատճառաւ այս տնդամ Վեր.
ձենանեան իր յարաբերութիւնը Գոլէճէն
կատարելապէս իզելով Գոնիայի մէջ
«ձենանեան Գոլէճ»ը կը հաստատէ: Լ-
հա այս կերպով Տարսոնի Գոլէճը նա-
խանամական անհասկնալի կարգա-
դրութեմբ. անուղղակի կերպով պատճառ
կ'ըլլայ Իզմիրի, Հաճընի և Գոնիոյ մէջ
երեք դպրոցներուն հաստատուելուն:
Մեր Աստուծոյն գործն է միշտ չարիքէն
բարիք հանել, հիմայ ալ Ան նոյն գոր-
ծը կը կատարէ:

Մեծ Պատերազմի միջոցին կարճ շըր-
ջան մը բացառութիւն ըլլալով դպրոցը
մինչև հիմա կը շարունակէ: Պատե-
րագմէն վերջ երկու կարգեր եւս շըջա-
նաւարտ եղան Տարսոնի Գոլէճէն, բայց
Կիլիկիոյ պարսպումէն վերջ դպրոցը չը
կրցաւ իր գոլէճի աստիճանը պահել և
եղաւ հայ սքուլ մը, ուր ներկայիս կը
յաճախեն մօտաւորապէս 150 աշակերտ-
ներ, որուն մեծամասնութիւնը իսլամ-
ները կը կազմեն. սակայն ցաւալի է որ
չի կրնար իր նպատակին ծառայել, տի-
րող ներկայ պայմաններուն պատճառաւ:
Իցիւ թէ այս կրթական հաստատութիւ-
նը Անտիոք կամ Քէսապ փոխադրուէր,
ուր գործելու աւելի ընդարձակ տալա-
րէզ կայ և իր իրական նպատակին ծա-
ռայելու և աւելի օգտակար հանդիսա-
նալու հնարաւորութիւն կայ:

* Մեր տեղեկութեան համեմատ այս կար-
գադրութիւնը եղած է ուղղակի Վեր. ձենանե-
անի առաջարկով:
Ծ. Իմր.



ՏԱՐՍՈՆԻ «ՍՔ. ՊՕՂՈՍ ԳՈՒԼԵՃ»Ի ՇԵՆՔԵՐԸ

Այս Գուլէճին ուսումնաւարտներուն կարեւոր մէկ մասը տարազրութեան եւ պատերազմի միջոցին թէպէտ մեռած կամ սպաննուած են, սակայն տակաւին Սուրիա, Պաղեստին, Եգիպտոս, Եթովպիա, Եւրոպա, Հար. և Հիւս. Ամերիկա ցրուած 140ի մօտ ուսումնաւարտներ եւ այս թիւին քառապատիկը թերաւորտ ուսանողներ կան, որոնք իբր հոգեւոր հովիւ, քարոզիչ, ուսուցիչ, բժիշկ, դեղագործ, փաստաւրան, ճարտարագէտ, սպորային ներկայացուցիչ, խմբագիր, հեղինակ, գրագիր և վաճառական պատուաւոր դիրքեր դրաւած են, և ուղղակի կերպով իրենց ազդերուն և անուղղակի կերպով մարդկութեան կը ծառայեն: Նկատի առնելով Գուլէճի գոյութեան տեւողութիւնը եւ ուսումնաւարտներուն թիւը, Թուրքիոյ մէջ հաստատուած ունէ մէկ գուլէճէն ան հրեք ետ չէ մնացած՝ ազգին ծառայելու եւ օգտակար ըլլալու մէջ:

Գուլէճի հաստատման թուականէն ի վեր իր ուսուցչական մարմնին օտար յայտնի անդամներն եղած են Տր. Մէք-լախլըն, Տր. Մարթին, Տր. Հէմլիթըն Տր. Քրիսթի, Մր. Մէքլիթըն, Միա Պը-

րուտըր, Միսիս Քրիսթի, Մր. Իմէր, Մր. Բօճըր, Տր. Կիպսըն, Տր. Նիւթ և Մր. Նիլսըն, և տեղացի անդամները եղած են Վեր. Պեհենիլեան, Վեր. Չազըրեան, Տասկալի Անանիա, Փրօֆ. Հայկազեան, Փրօֆ Փիլիպպոսեան, Տոքթ. Բէճէպեան, Տոքթ. Եօրկի, Տոքթ. Թուման, Տոքթ. Պոհճալեան, Փրօֆ. Քիւլիէլեան, Պաղտիկեան, Գալուստեան Կայծակեան, Մեղքոնեան, և ուրիշ օգնական ուսուցիչներ:

Կարծեմ կ'արժէ հոս Գուլէճի առաջին նախագահը Վեր. Ճենանեանի և երկրորդ նախագահը Տր. Քրիսթի մասին մի քանի խօսք խօսիլ:

Վեր. Ճենանեան իր ժամանակին Թուրքիոյ մէջ հովիւներու եւ քարոզիչներու մէջ հզական դէմք մըն էր:

Քարոզ տալու ատեն իր լեզուական և մարմնական արտայայտութեան ձեւերը թէպէտ կը քննադատուէին ոմանց կողմանէ, բայց իր անկեղծութիւնը, եռանդը, պարզ բայց կրակոտ քարոզները, որոնք մարդոց ապաշխարութեան և փրկութեան համար իր հրատուչոր բաղձանքը կը յայտնէին, առանց բաձառութեան ունկնդիրները կը



ՎԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՃԵՆԱՆԵԱՆ

Հիմնադիր Տարսունի և ապա Գոնիայի «Ճեմանեան» Գոյեցներուն

հմայէին: 1892 ին, երբ տակաւին ուսանող մ'էի, ամառ մը իրեն ընկերացայ Սիւ, Երէպագան, Ֆէքէ, Հաճըն, Սար, Ազիզիէ, Սիվազ, Կէմէրէք, Կեսարիա, Մուհմուսըն, Թալաս և Նիկոտէ կատարած իր երկար աւետարանչական պտոյտին միջոցին: Մեր այցելած վայրերուն մէջ անմոռանալի տպաւորութիւններ կ'ունենային իր կենսալիք քարոզները, զորոնք լսելու համար հոծ բազմութիւններ կը խռնուէին ժողովատեղիները: Այն պէս կը կարծեմ որ Թուրքիոյ մէջ եղած չէ աւետարանիչ մը, որուն միջոցաւ այնքան հոգիներ ապաշխարած ըլլան որքան որ Վեր. Ճենանեանի միջոցաւ եղած է. քարոզիչի մը բոլոր գործն ալ այս է: Շատ յայտնի էր որ Ճենանեանի կոչումը կրթական ըլլալէ աւելի աւետարանչական էր, այսու հանդերձ իր հնգամեայ նախագահական պաշտօնավարութեան միջոցին երբեք

կարելի չէ մտնալ աշակերտներուն վրայ իր թողուցած հոգևոր ազդեցութիւնները: Շատ փափաքելի է որ ոմանց կողմանէ նկատի առնուի այս պատկառելի անձին յիշատակը յաւերժացնելու համար կարևոր ձեռնարկ մ'ընելու հարցը:

Գալով Տր. Քրիսթիի՝ ան այնպիսի անձերէն էր, որուն նմանը ոչ միայն Թուրքիոյ մէջ այլ նաև Ամերիկայի մէջ քիչ կը գտնուէր: Անոր միտքն ու սիրտը շատ մեծ էին, խօսակցութիւնը՝ հրապուրիչ, յիշողութիւնը՝ զօրաւոր, ծանօթութիւնը՝ բազմակողմանի, կամքի ոյժը՝ նոյնիսկ ընական սահմանը անցած, մանուկի հետ մանուկի պէս և փրկիսոփայի հետ փրկիսոփայի պէս վարուելու մէջ՝ շատ ճարտար, պաշտպանողական և յարձակողական յանդարձակի դիրքեր գրաւող, և ամենազբաղաւորտ հայր մը, եղբայր մը կամ բարեկամ մը՝ երբ իր խղճին ազդեալ:

իր հազար հատորներէ բաղկացեալ զը-
րագարանը գրեթէ իր մեծ գլխին մէջ
թաքնուած էր, շատ դժուար էր գտնել
ուէ բաժին մը որ իր ծանօթութեան
սահմանէն դուրս մնացած ըլլար: Գո-
լէճի բոլոր կարգերուն դասերէն կրնար
քննութիւն առնել, ի բաց առեալ մէկ
կամ երկու լեզուներէ: Իր բարոյական
և հոգևոր յարաբերութեանց մէջ ուսու-
ցիչներու և ուսանողներու հետ հակա-
ռակ խիստ վարուելուն շատ զուարթա-
բարոյ մէկն էր և սրամիտ զուարճալիք-
ներէն շատ հաճոյք կ'զգար: Անգամ
մը Մատէնի կառավարիչը Տարսոնի մէջ
իրեն տուած այցելութեան միջոցին
կապէս կ'ըսէր. «Տր. Բրիսթի, Մատէ-
նէն վերագառնալէն վերջ մեզ մոռցաք»,
որուն պատասխանելով կ'ըսէ. «Ոչ, աէր
իմ, միշտ կը յիշեմ ձեզ երբ իմ ձեզմէ
ծախու տուած էջս կը տեսնեմ»: Գոլէ-
ճը կանոնաւորեց, որուն ընթացաւարտ-
ները թէ՛ Պէյրութի և թէ՛ Ամերիկեան
Համալսարաններու մէջ առանց քննու-
թեան ընդունիլ տալու մասին մեծ ջան-
քեր ըրաւ, որոնք իրաւացիօրէն գնա-
հատութեան արժանի են:

Կ'ուզեմ յիշել մի քանի զէմքեր ևս
որոնք ուղղակի կամ անուղղակի կիր-
պով Գոլէճի յաջողութեան մէջ ծառա-
յութիւն ունեցած են: Տր. Բրիսթի
կինը եւ անոր սերտ գործակիցը Միսիս
Բրիսթի 26 տարի գուրգուրալի մայր
մը եղած է դպրոցին տնտէր աշակերտ-
ներուն: Հիւանդներու ճակատներուն
վրայ առաջին դրուող ձեռքը անորինն
էր. դեղի դրոշմները անոնց բերանները
տանող առաջին մատերը անորիննն
էին, անոնց վտանգաւոր հիւանդու-
թեանց միջոցին առաջին անգամ ար-
ցունք թափողը ինքն էր: Ծանր հի-
ւանդներուն քով երբ զիշերը անցնել
պէտք ըլլար, առաջին հսկողը ինք կ'ըլ-
լար: Անիկա այնպիսի մէկն էր որ ա-
ռանց յոգնելու, առանց իր ջանքերը

խնայելու թշուառներուն համար կ'աշ-
խատէր իր զրիչովն ու գործնական ծա-
ռայութեամբը: Նոյն անձնուիրութեամբ
անիկա Մարաշի մէջ ալ աշխատած եւ
կարօտներուն օգնած էր այն բոլոր տա-
րիներուն միջոցին, երբ իր ամուսինը հոն
Աստուածաբանական ձեմարանի մէջ իր
փրոֆէսոր և Ակադեմիայի իբր տնօրէն
կը գործէր: Հիմա այս կինը Ամերիկա
կը գտնուի, ուր տասը տարի առաջ իր
ամուսինը հոգին յանձնելէ վերջ Փէսէ-
տինա քաղաքը իր կրտսերագոյն դուստ-
րին տունը և երբեմն ալ իր տկարու-
թեան պատճառաւ ապաքինարանի մը
մէջ կ'սպասէ իր երկնային կոչին, իր
վարձատրութիւնը ստանալու համար:

Պէտք է հոս յիշել նաեւ վեր. Համ-
բարձում կէօզգալայճեանի տնունը, որ
երկար տարիներ Տարսոնի Աւետարանա-
կան բեմէն խօսած, իր մաքուր նկարագ-
րովն ու օգտակար քարոզներովը Տար-
սոնի Գոլէճին ծառայած է, և որ ներկա-
յիս ալ զանազան թերթերու մէջ իր
տրամաբանական, գործնական, հոգևոր
գրութիւններովը մեր ընդհանուր ժողո-
վուրդին կը ծառայէ: Մինչև 1926 ա-
նիկա Ատանայի մէջ մնացած Հայ բեկոր-
ներուն ծառայած է իր քարոզներովն ու
միտիթարիչ օգնութեամբը, և ասկէ երևե-
տարի առաջ իր կնոջ ընկերակցութեամբ
Ամերիկա իր զաւակներուն քով գա-
ցած է:

Զանցառնելի չեն երբեք երկու Ուէպ
քոյրերու Տարսոնի Գոլէճին մատուցած
ծառայութիւնը. այս երկու քոյրերը յի-
սուն տարիներէ ի վեր Ատանայի Ամե-
րիկեան Աղջկանց Սէմինէրիին մէջ և
ներկայիս ալ Պէյրութի մէջ մեր ազգին
անգլիկ ծառայութիւններ մատուցած են:
Տարսոնի Գոլէճը մինչ երիտասարդներ
կը կըթէր այս քոյրերը անոնց համար
յարմար կենսակիցներ պատրաստելու
գործով զբաղած էին, որպէսզի անոնք
ուսելի օգտակար կարենան ըլլալ: Ա-

նոնք մեր աղէտեալներուն օգնած, մեզի հետ լացած են, ներկայիս հակառակ իւրենց յառաջացած տարիքին դպրոցին մէջ կը շարունակեն մեր որբերը խնամել, և մեր այրիները մխիթարել:

Վերջապէս կ'ուզեմ յիշել ամէնուն ծանօթ զիւցազնասիրտ Տր. Նէզպիթ Չէյմպլըսը, որ Գոլէճին յաջողութեան համար գնահատելի ծառայութիւններ կատարած է, երկար տարիներ անոր Վարչական Ժողովին մասնակցելով: Երկարատեւ Կարիւնի մէջ իբր միսիօնար գործելէ վերջի. դարուն սկիզբը Ատանա փոխադրուած է. կէս դարու մօտ իր միսիօնարական գործունէութեան միջոցին զինքը լաւ ճանչցողներուն կողմանէ ամէնէն շատ սիրուած և յարգուած անձ մըն է: Գիւրիւն չէ Տր. Չէյմպլըսը շուտ և լաւ ճանչնալ: Եթէ այս թերութիւն մը նկատուի աւելի իրեն կը պատկանի ան, քանզի ան թէպէտ Գողիարի կազմը և զօրավարի կերպարանքը ունի, ինքզինքը պատկանող և իր առաքինութիւնները ծածկող մեծ մարդ մ'է, որուն նմանը իմ հանդիպած մեծերուն մէջ հազուապէս է: Շատ դժուար եղած է գտնել և զիտնալ զայն, որ Սաւուղի նման հեզ և ծածկուելու մէջ անոր պէս ճարպիկ եղած է: Ինչ անըման առաքինութիւն: Ուրախ եմ որ անցեալ տառա Պէյրութի մէջ առիթը ունեցայ այցելելու մեր այս սիրելի միսիօնարը եւ հայրը, որ վերաւորուած ըմբիշի մը նման տկարութեան պատճառաւ մենութեան ծոցը ամբիփութեամբ էր:

Սիրելի՛ ազգակիցներս, Աստուծոյ կողմանէ զրկուած Աւետարանի այս հաւատարիմ աշխատաւորներուն հանդէպ մեր յարգանքի պարտականութիւնները արդարօրէն կատարենք, մինչ անոնք տակաւին մեզմէ չեն բաժնուած: Կ'արժէ, հաղար անգամ կ'արժէ:

Աղեքսանդրիս ՍԱՄՈՒԷԼ ՄԵԼԻՔՆԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Աստուծոյ կամքը այն է որ մենք խաղաղարարներ ըլլանք: Եթէ մենք զԱստուծոյ Հայր կ'անուանենք եւ իր սրտակից որդիներն ենք, եթէ մենք տիեզերական եղբայրակցութեան փափաքէն մղուած կը բաղձանք տեսնել իրականանացումը ազգերու սերտ յարաբերութեանց, և եթէ Տէրոջը երանութեան ժառանգակից ըլլալ կը փափաքինք պէտք է խաղաղարարներ ըլլանք:

Մենք չենք կրնար ըլլալ խաղաղարարներ, եթէ երբեք զայն գնահատող հոգի մը եւ Քրիստոնէական ներքին խաղաղութեան փորձառութիւնը չունինք, եթէ երբեք հոգեւոր կեանքի բնական պահանջները չենք զգար, եթէ երբեք մենք մեզի համար Յիսուս Քրիստոսի միջոցաւ Աստուծոյ հետ ներքին խաղաղութեան գաշինքը կնքած չենք: Ուրեմն նախապէս խաղաղարարներն պէտք է որ, ունենան այդ ներքին ներգաշակութիւնը, ու զայն ապրելով բնականաբար պիտի առաջնորդեն ուրիշները խաղաղութեան: Աստուած պիտի ցոլանայ ասոնց կեանքերուն մէջ և իրենք Աստուծոյ որդիները կոչուելու արժանի պիտի ըլլան: Ասոնք Քրիստոսի փառքին մասնակից պիտի ըլլան և երբ երկինքը բացուի սուրբ սրբոցէն Աստուած պիտի բացականչէ. «Անիկայ է իմ սիրելի որդիս որու հաւներ եմ»: Ահա ներքին խաղաղութիւնը՝ որ է բանալին նաեւ տիեզերական խաղաղութեան: Պէտք է իւրաքանչիւր անհատ անձամբ ունենայ այս բանալին որ կարող ըլլայ մտնել խաղաղութեան փառաւոր պալատը:

Ամէնէն աւելի զօրաւոր ազդակը՝ մարդոց մէջ Քրիստոսի ոգիին զարգանալն է: Անոր բերած խաղաղութիւնը արդարութեան վրայ հաստատուած է: Յիսուսի խաղաղութիւնը, զոր աշխարհ չի կրնար տալ, հաւատքի միջոցաւ

մարդկային կամքին եւ Աստուածային կամքին միջեւ հաստատուած նոր համաձայնութեան արդիւնքն է :

Այս օր աշխարհ նոր Յիսուաներու պէտք չունի, այլ իր ունեցած Բրիտանո Յիսուան եղական եւ բնական, բարձր եւ սակայն կիրարկելի վարդապետութիւնները շիտակ հասկնալու եւ հասկցնելու համար ժամանակի զարգացման հետ համընթաց յառաջ գալով վեհագի կղերններու եւ հոգեւոր հովիւներու կը կարօտի: Սաղաղութեան սուրբ գործին համար նուիրուած անկիզձ, գործօն եւ ուղի մշակներու կը կարօտի: Մեր վրայ կը ծանրանայ խաղաղութեան գործը հաստատել եւ տարածել: Մեր կեանքի նպատակը բովանդակ աշխարհի խաղաղութիւնը պէտք է ըլլայ: Այս պէտք է քարոզենք. այս պէտք է սորվեցնենք մեր նոր սերունդին. եւ այս միևնոյն նպատակաւ անհատներու սրտերուն մօտենալով արթնցնենք հոն թաղուած ներքին եւ անձնական խաղաղութեան սերմերը: Պէտք եղած սնունդը հայթայթենք որպէսզի բարգաւաճին, դուրս գան մարդու մէջ գտնուող բարիքի անհուն կարելիութիւնները, խաղաղութեան ինքնաշարժի անիւներու թաւալումը արագացնելու նպատակաւ:

Եթէ ներքին խաղաղութիւնը եւ դրական բարի կամքը մեր կեանքի բնական իրականութիւնն է, այն ատեն ինքնաբերաբար խաղաղութեան առաքեալներ պիտի ըլլանք:

Յիսուս մարդիկը սիրաշահելու համար մօտեցաւ անոնց, ապրեցաւ իրենց հետ, սիրեց զանոնք եւ բարեկամացաւ ծառայելով անոնց: Եւ այս կերպերով օգնեց խաղաղութեան գործին: Ապրեցաւ անոր կեանքը որդիական անհուն սիրոյ արտայայտութեամբ:

Մենք քրիստոնեաներս, որ բոլոր մարդկութեան մէջ ներքին խաղաղութեան զարթոնումի փափաքը ունինք, կը

հաւատանք թէ՛ Յիսուս Բրիտանի կեանքին մէջ մարմնացած սէրը ամենաազդու միջոցն է անոր իրազորման համար:

Ներկայիս կը շեշտուի սա կէտը թէ ազգերը պէտք ունին սորվելու, ոչ միայն Աստուծոյ Հայրութիւնը եւ մարդոց ուղիութիւնը, այլ նաեւ մարդոց եղբայրական լըցութիւնը, որ մոռցուած էր երէկի ընդհանուր պատերազմին:

1914 թ. այս աղետալի եղբայրասպան պատերազմին Ֆրանսայի եւ Գերմանիոյ ճակատամարտներուն մէկուն մէջ, զիշիւր ատեն սարսափելի կոխ մը տեղի կ'ունենայ: Մարդիկ վայրենի զաւաններու նման կառգած, անխիղճ տրարքներ կը գործադրեն: Տխրադժուոյթներ իր արծաթաշու ճառագայթներով կը լուսաւորէ բազմութիւն միեւեղ եւ վիրաւորներու դէմքերը: Մահամերձ Ֆրանսացի զինուորի մը քիմքը չորցած, սիրտը այրած կաթիլ մը ջուրի կարօտը կը քաշէր: Վերջին ճիգով ան իր տեղէն սողալով ծանրապէս վիրաւորուած՝ անշարժ Գերման զինուորի մը կը մօտենայ եւ ջուր կը խնդրէ: Գերման զինուորը իր սրտակին (մաթարա) մէջ ունեցածը անոր կը հրամցնէ: Ֆրանսացի զինուորը իր դողդոջ ձայնով շնորհակալութիւն յայտնելով միատեղ կ'աւելցնէ. —

«Քաջարի զինուոր, դուն քու հայրենի երկրիդ համար պատերազմեցար, իսկ ես իմ մայրենի երկրիս համար, բայց մենք թերացանք պատերազմելու մեր հայրենիքներու եղբայրակցութեան համար»:

Դուն եւ ես քրիստոնեայ համայնքի մը անդամներն ըլլալով գերեւ ունինք կատարելիք՝ խաղաղութեան պալատը ճոխացնելու, բարձրացնելու եւ կանգուն պահելու համար: Մենք անոր իմաստուն ճարտարապետներն ենք, ուրիշ խօսքով մեր հայրենիքներու եղբայրակցութեան բարգաւաճման համար պատասխանատու ենք: Մենք խաղաղութիւն ընելու համար ստեղծուած ենք, եւ

այս ճամբան մեզ առաջնորդելով Աստուծոյ որդիները կոչուելու արժանի պիտի ընէ։ Որչափ կը ծառայենք մեր այս որդրական նուիրական պարտականութեան. որչափ բարձրացած ենք ներքին խղճովութեան կեանքին մէջ։

Մենք պէտք է գիտնանք թէ՛ բովանդակ մարդկութիւնը կը պատկանի միեւնոյն Աստուածային ընտանիքի մը։ Յիսուսի աչքերով աշխարհին նայելով հոն տեսնելու ենք միմիայն մէկ ցեղ՝ ոչ թէ հինգ, որ է մարդկային ցեղը։

Պէտք է գիտնանք թէ՛ Աստուածային շնորհքներու անսահման աղբիւրը այն համեմատութեամբ կրնանք վայելել, որչափ որ կրնանք Բրիտանոսի խաղաղ կեանքին հետեւիլ։ Վերջապէս պէտք է գիտնանք թէ՛ մենք անմահ հոգիներ ենք. զգանք մեր հոգիներու ներքին փափաքը և խորունկ տենջը։

Միաբանինք ուրեմն, Սբ. Օգոստինոսի հետ աղաղակելու. «Ո՛վ Աստուած, մեր հոգիները քեզի համար ստեղծեցիր և անոնք չեն կրնար խաղաղութիւն գտնել, մինչև որ Բուժէ՞ր զգտնեն զայն»։
Կ. Ս. ՖԱՐԱՃԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՅՐԵՐ

Յ. ՎՐԹԱՆԷՍ ՊԱՐԹԵՒ

Վրթանէս՝ ինչպէս ըսինք նախապէս, Հոռաւորչի անդրանիկն էր, սակայն պատճառով մը իր կրտսերը աւելի առաջ գահակալեց Հայրապետական աթոռին վրայ և անոր վախճանումէն վերջ էր որ հայ ժողովուրդը՝ նախանձախնդր Հոռաւորչի սերունդէն հայրապետ ունենալու սկզբունքին, հրաւիրեց զայն բազմել իր հօր և կրտսեր եղբոր աթոռը։

Վրթանէս 261 ին ծնած և իր ծնողաց կամաւոր բաժանումէն վերջ կեսարիա մնացած էր։ Հոն աշխարհական գործերու հետամուտ լինելով, այդ սուպարէ-վին մէջ ժամանակ մը քաղաքական

կեսնչի անելներու մէջ ալ մխրճու-նալու արժեք կը հաւոտուի թէ, մեծ ընդունելութիւն և ճարպիկ գիտնալի-տութիւն ցոյց տուաւ։ 20 ին ամուս-նացաւ, սակայն երկինք չլացաւ անոր ամուսնութիւնը. օրհնել և 15 տարի ամուլ մնացած իր կինը, առն ու կնոջ ջիւ-մեռանդ աղօթքին, երկարատեւ հսկում-ներու և սրաւբուխ արջունքներէն ի պատասխան, երկուրեւեկ մը ստացաւ եհովայի անուպատ շնորհներու գունձէն, և ծնաւ Գրիգորիոսն ու Յոսիկը, որոց երկուքն ալ ապագային արժանաւոր առաքեալներ դարձան Բրիտանոսի Աւետարանին համար, երկուքն ալ արժեցնելով այն խունկն ու բուրվառը, աղօթքն ու աղաչանքը, որ անոնց ամուլ ծնողները 15 տարի բարձրացուցեր էին զէպի «Պարգեւատուն ամէնեցուն» իգահը։

306 ին հեռացաւ կեսարիայէն և իր երկու սիրանուններով, որոնք 11 տարե-կան էին յայնժամ, Հայաստան եկաւ և Ս. Գրիգորի այսինքն իր հօր ձեռքէն ստացաւ եպիսկոպոսական աստիճան։ Ասկէ վերջ ալ Վրթանէս իր բնատուր ձիրքերով և ստացական փորձառու-թեամբ օգտակար ծառայութիւններ մա-տուց Հայաստանի քաղաքական կեանքին, որը հետզհետէ ոչ նախանձելի դրութեան մը կը մատնուէր։

Երբ յիշեցինք Վրթանէսի մատուցած ծառայութիւնները քաղաքական ասպարէզի մէջ՝ աւելորդ չ'ըլլար ակնարկ մը նետել Հայաստանի քաղաքական կացութեան վրայ, Տրդատի և Հոռաւորչի մահէն վերջ։

Տրդատի յաջորդները լինելով թոյլ, հաճոյասէր և անոր անարժան ղէմքեր, փոխանակ պետական գործերով զբաղե-լու որսի, կերովսուսի և կանանոցի մէջ կը վատնէին իրենց ոյժն ու ժամանակը, արեւելեան մոլութիւններու, ծուլու-թեան և անհոգութեան միացնելով նաև արեւմտեան — Հռոմի — աղետալի վար-

քըն ու սովորութիւնները: Հակառակ Յունաց Մեծն Կոստանդինոս կայսեր Պարսից Ներսէի թագաւորին միջև կնքուած 40 ամեայ խաղաղութեան գտնիքին, Պարսից Շապուհ թագաւորը՝ ռոնձգութիւններ կ'ընէր յունական եւ հայկական գաւառներու վրայ, յաճախ կռուի թաւոր դարձնելով երկու երկիրներն ալ: Այս գծեղակ կացութեան մէջ, հայոց թագաւորներ՝ փոխանակ իրենց պատիւը եւ հողը պաշտպանելու, վերոյիշեալ անարժան կենցաղը կ'ապրէին, այնպէս որ թագաւորական հրամանները այլեւս անարժէք դարձեր էին մեծամեծ զիւրքերու եւ ճոխութեանց մէջ յափրացած նախարարներու քով: Յաճախ այս ապերասան նախարարները կը ձգտէին ինքնագլուխ կռուվարել իրենց սեփականացուցած գաւառները, որովհետեւ հեղինակութիւնը, իշխանութիւնը թուլցած էր, «ձուկը գլխէն հոտած» ըլլալով:

Այսօրինակ ողբալի կացութեան մը մէջ հրե թագաւորը մեռնէր եւ անոր յաջորդութեան հարցը մէջտեղ դրուէր, հազար պառակտումներու կարգին յունաստի եւ պարսիստի երկու որոշ խմբակներ, ա'լ աւելի կը խորացնէին հերձուածը ահաւոր: Միայն եկեղեցւոյ հոգեւորն աջակցութեամբ կ'աշխատէին իշխանութիւնը զօրացնելու եւ գահը փրկելու միջոցներուն մասին խորհիլ, որուն հետեւանքը ըլլալով, այդ սուրբ կղերները՝ զոհ կ'երթային ապիկար դաւադիրներու մոլուցքին, վաղուհաս եւ խուժողուժ մահուամբ մարտիրոսանալով ազգին համար:

Ահա այդպիսի շրջանի մը մէջ Վրթանէս կը յաջորդէ Արիստակէսին, 333 ին, Խոսրով թագաւորի երրորդ տարին, 72 տարեկան հասակին մէջ, տասնեակներով տարիներ տառապելէ վերջ քաղաքական այս անբաղձալի քառսին մէջ: 337 ին յոյն եւ պարսիկ բախումներու վախճանին

Հայաստան ալ ոտից կոխան եղած էր, որ խաղաղութիւնը վերահաստատուուհամար արդիւնաւոր ճիգեր թափեց ծերունի հայրապետը:

Աւելի ցաւալի պարագայ մը: Լուսաւորչի եւ Տրդատի ջանքելով, քրիստոնէութիւնը թէեւ հաստատուած էր Հայաստանի մէջ, սակայն, այն ամէն կողմէր պտած իր թափանցումը եւ այդ բացառիկ ճիգերու յաջորդող թուլութեան շրջանին, շատ մը գաւառներու մէջ կրկին ծայր տուած էր կռապաշտութեան ոգին, մեծամեծ հոգեւոր եւ հարստութեան տէր դարձած քուրմերու մահացու հակառակութեանց պատճառով: Այնպէս որ, Վրթանէս այս մարզին մէջ ալ մեծ դժուարութիւններու զիմազրաւելու կը պարտադրուէր: Քաղաքական եւ կրօնական այս բարդ, կնճռոտ եւ ցաւալի անկումներու զոհ գացիր էին ցարդ Տըրդատ՝ թունաւորուելով, Արիստակէս՝ սպաննուելով, եւ այդ բախար կ'սպասէր Վրթանէսին ալ, ինչպէս իրերու ընթացքը պուշակել պիտի տային արդէն, եթէ նախախնամութեան ձեռքը չհասնէր օգնութեան:

Աւանդութեան մը համաձայն, Վրթանէս 339 ին Տարօնի Տէրէք գիւղը կ'երթայ, նախագահելու համար տարեկան տօնակատարութեան մը, որ հեթանոսական շրջանէն իվիր կը կատարուէր տարուէ տարի եւ զոր Ս. Կարապետի տօնին փոխէր էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Երբ Վրթանէս եկեղեցւոյ մէջ կը պատարագէր, յանկարծ 2000 հոգիւնոց խուժան մը, լեռնականներէ եւ քուրմերէ բաղկացած, կը յարձակին տաճարին վրայ եւ կ'ուզեն հայրապետը սպաննել: Ըստ Բիւզանդ պատմիչի, ասոնք՝ հեթանոսութեան միտող նախարարներու եւ այդ գաւառի բոլոր ինչ ինչ սողորանքով գրգռուած եւ զրկուած էին: Այս տիկիւնը, հայրապետին կողմէ յանդիմանուած էր իր անպարկեշտ կենցաղին համար եւ

էգ վագրը վրէժ լուծել կ'ուզէր սուրբ հայրապետէն: Պատմիչները այնպէս կը հաւատեն որ, ալեհեր կաթողիկոսին փառաշուք կերպարանքը եւ անոր դէմքէն ցոլացող աստուածային հզօր եւ շանթող լոյսը, կարկամեց եւ եղած տեղերնին գամեց անզգամ յարձակողները, որոնք սրբազան հայրապետին ձեռք վերցնելու անկարող ըլլալէ զատ, ապուշ կըթած, տեսակ մը մտացիր վիճակի ենթարկուեցան եւ կրկին հայրապետին աղօթքին եւ մաղթանքին շնորհիւ գտան ինքզինքնին եւ կորսուեցան իրենց հետքերուն վրայ...:

Այս զէպքէն քիչ վերջ Պարսից Շապուհ թագաւորը իր որդին զրկած էր Հայաստան, հայոց գահը զրաւելու համար: Զօրաւոր բանակով մը երկիրը արշաւող այս բռնապետին առջեւէն փախած եւ Պոլիս ապաստանած էր ժամանակին հայ թագաւորը՝ Տիրան: Վրթանէս ալ Տիրանի կ'ընկերանայ, թէ՛ անմիջական վտանգէն ճողոպրելու եւ թէ Պոլսէն օգնութիւն հայցելու համար: Իրենց բացակայութեան, գահուն խնամակալը՝ Արշաւիր Կամսարական՝ յաղթեց Տիրանը եւ երբ Տիրան ու Վրթանէս յունական օգնական զունդերով Հայաստան դարձան, հեշտիւ կրցան վերագրաւել մին արքայական, իսկ միւսը հայրապետական գահերը:

Այսպիսի դժնգակ եւ բազմաշարժար կեանքէ մը վերջ, Վրթանէս շատ չապրեցաւ եւ պլպլացող կտնթեղին իւղը հատնելով մարեցաւ այն եւ հանգեաւ ի Տէր 88 տարեկանին, 341 թուականին, 8 տարի կաթողիկոսական աթոռը գրաւելէ եւ բազմադիւն, հաւատաւոր եւ սուրբ կեանքի մը օրինակելի տիպար մը ներկայացնելէ վերջ...: Անոր յիշատակն ալ օրհնութեամբ թող ըլլայ եւ իր սուրբ կեանքը միւլ բոլորիս համար օրինակ մը:

Հպիպ

ՌԵՏՈՒՆԻ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՄԱՌԷՇԱԼԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Յրանաացի Կոմս մը, որ Մառէշալի (հանգուցեալ Զօրավար Պութիլիդուտրերէն մէկը) հոգեւոր ժողովներուն մէջ, Օպէր փողոցի մեծ սրահը անոր այսպէս ըսաւ. «Ձեզի միայն պատկերներ կը պակսին. զոր օրինակ սուրբերու պատկերները: Այդ գեղեցիկ դէմքերը իրենց քաղցր եւ երկնային արտայայտութիւններովը պատկառանքի եւ խաղաղութեան զգացում կը ներշնչեն, Կոյս Մարիամի, Ս. Յրանչիսկոսի եւ ուրիշ շատերուն նկարներով ձեր սրահները զարդարեցէք: Այս է ձեր պակասը, չե՞նք կրնար ձեզի օգնել»: «Տէր», ըսաւ մառէշալը «գալ Կիրակի իրիկունը կ'ուզէ՞ք գալ»: «Անպատճառ կ'ուզեմ. դժբ պիտի խօսիք»: «Այո» պատասխանեց մառէշալը, «բայց անպատճառ ներկայ եղէք»: Յաջորդ Կիրակին փրկութեան Բանակին Մառէշալը իր սպաներուն փոքր խումբը միասին բերաւ, էրիկ մարդերը զատ եւ կիները զատ իր երկու կողմը շարեց, եւ անոնց ճիշդ մէջտեղը կեցած քարոզեց: Ժողովին լրանալէն վերջ կոմսը յառաջ անցնելով ըսաւ. «Մառէշալ, դուք պատկերներու պէտք չ'ունիք, ձեր երկու կողմերը շարուած դէմքերն են այդ պատկերները»:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՇԱԲԱՐ ԵՒ ՀԻՒՄԱՆՏ

Միացեալ Նահանգաց մէջ հիւժախտի դէմ մաքառող կաղմակերպութիւնները միացեալ ճակատ մը կազմած են այս մահացու հիւանդութեան դէմ, հարիւրէն աւելի մասնագէտներ — քիմիագէտ

ներ, մանրէաբաններ, զեղազէտներ, բնախօսներ և բժիշկներ— իրենք զիրենք նուիրած են այս ախտին պատճառը եւ ապա դարմանը գտնելու դործին:

Շատոնց ծանօթ պարսկացի մըն է հիւժախտագիտութեան մէջ, որ բուսական պատճառով զոյուածներ, պասիլներ, մարմնին տարրեր մասերուն մէջ բոյն կը շինեն, պզտիկ գնտիկներու ձեւով եւ յառաջ կը բերեն այս ախտը, որ ժողովուրդին ծանօթ է թոքախտ բառով որ միայն հիւժախտի կամ ուռականութեան մէկ տեսակն է: Գիտունները ահա այս գնտիկները (արուեստականօրէն պէտք եղած չափով շատցնելով) քիմիական մանրազննին քննութեան ենթարկեցին, որուն իրր արդիւնք գտան թէ հիւժախտի մանրէները կը պարունակեն մեղի շատ ծանօթ սննդեղէնի երկու տեսակները, իւզ եւ շաքար: Առաջին անգամ ըլլալով մասնագէտները գտան թէ բազմատեսակ շաքարներու և իւզերու մէջէն որոշ իւզ մը հիւժախտի թուռաւոր գնտիկները կը բաղկացնէ և որոշ շաքար մը մարմինը կը հիւծէ: Այս շաքարը եւ իւզը, մինչև հիմա կատարուած քննութեան համեմատ, մեղի ծանօթ շաքարի եւ իւզի նման քիմիական բաղադրութիւն մը ունին, իրողութիւն մը որ մեծ զարմանք կը պատճառէ գիտուններուն: Մասնագէտներու համար մեծագոյն հարցն է այս շաքարը եւ իւզը անվընաս վիճակի մը վերածել:

ԻՆՉՈՐԻ ՇԱՔԱՐԱԽՏԸ ԿԸ ՇԱՏՆԱՅ

Շաքարախտի բուն պատճառը տալիս անծանօթ կը մնայ: Սաչափը ծանօթ է որ կերպով մը պանկրէատը կը դադրի իր որոշ հոյզը արտադրելէ, որ պէտք է՝ ոյժի և մասններու շինութեան համար շաքարը օգտակար ձեւի վերածելու:

Ապահովագրական ընկերութեան մը կողմանէ կարգ մը փորձագէտներու պատ-

րաստած վիճակագրութեան համեմատ պէտք եղածէն աւելի կերակուր ուտելը պատճառ եղած է որ Ամերիկեան ժողովուրդին մէջ շաքարախտէ մեռողներու թիւը աւելնայ:

ԵՐՐՈՊԱՆ ՍԱՌՆԱՐԱՆԻ ՊԻՏԻ

ՎԵՐԱԾՈՒԻ ԵԹԷ...

Աշխարհիս կլիման և օդին եղանակաւորութիւնները լուրջ ուսումնասիրութեան առարկայ դարձած են այսօր: Գիտունները կը ջանան կլիմայի եւ օդի փոփոխութիւնները որոշող ազդակները գտնել և այդ մասին նախագուշակութիւններ ընել:

Անձեալ ձմեռ Եւրոպայի շատ մը երկրներուն մէջ սաստիկ ցուրտ տիրեց և մինչև Միջերկրականի եզերքը գետինը ձիւնի թանձր խառով մը ծածկուեցաւ, որ պատմութեան մէջ անօրինակ է կ'ըսուի:

Եւրոպայի, մասնաւոր արեւմտեան մասին, կլիման որոշելու մէջ մեծ բաժին ունի Մէքսիքոյի Ծոյէն ելլող ովկիանոսային հոսանքը, որ 2100 ոտք խորութիւն և 50 մղոն լայնք ունի: Ջուրի այս լայն յորձանքը հասարակածային արեւի տաքութիւնը ծածկ Անդլանտեան ովկիանոսը տնցնելով կ'այցելէ Եւրոպայի արեւմտեան եզերքը և կը տաքցնէ Ֆրանսական, Բրիտանական և Սքանտինաւեան հոգերը. գիտական հաշուի համեմատ այս հոսանքը մէկ վայրկեանի մէջ երկու միլիօն թօնօ ամուսի արտադրած տաքութիւնը դուրս կուտայ: Եթէ օր մը այս հոսանքը ունէ կերպով իր ընթացքը փոխէ ու Եւրոպան զրկէ իր բարեբար տաքութենէն, արդիւնքը շատ աղետաւոր պիտի ըլլայ այդ ցամաքին համար: Բոլոր Եւրոպան զրկել Սքանտինաւիոյ կլիման պիտի ունենայ, սաստիկ եւ երկար ձմեռ եւ կարճ ամառով, Բրիտանական կղզիները եւ ուրիշներ տեւական սառույցով պիտի ծածկը-

ւին, շատ մը ձկնարաններ իրենց ձուկերէն պիտի զրկուին: Բայց ասոր հակառակ ըլլալով Ափրիկէի միւս Սահարան բարեխառն կլիմայով մը պիտի օժտուի և պարտէզի մը պիտի վերածուի:

Հերոս ձմեռուան ցուրտը Եւրոպական գիտունները խորհիլ տուաւ, որոնք սակայն չկրցան անոր զաղանիքը գտնել: Մէքսիքոյի Ծոցի հոսանքը իր ընթացքը չէր փոխած, բայց անհասկնալի պատճառով մը Եւրոպան զրկուեցաւ անոր բարեխառնիչ տաքութենէն: Փրօֆ. Ալֆոնս Պէրօժէ, Ֆրանսայի ովկիանագէտ հեղինակը, կը յայտնէ թէ օր մը բուստերը Ֆլորիտայի նեղուցը պիտի խափանեն և այսպէս պատճառ պիտի ըլլան որ այս հոսանքը իր ընթացքը փոխէ և Եւրոպան սառնարանի վերածուի:

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՊՅՅԶ ՀԱՅ ՍՐՈՒՆ

Նախկին ուսուցչական կազմով զըպրօց վերսկսած է իր գործունէութեան, 183 հոգիներէ բաղկացեալ աշակերտութեամբ, որուն 29ը Գոլէճի կարգերուն մէջ, 57ը Հայ Սքուլի մէջ, 97ը նախապատրաստականի մէջ. գլխերօթիկներու թիւն է 26, Հալէպէն դուրս վայրերէն եկողներունը՝ 33:

Ամառուան միջոցին ինքնօգնութեան բաժնին մէջ գործող ուսանողները զըպրօցին համար պէտք եղած աշակերտական բոլոր գրասեղանները շինած, և այսպէս եօթը տարի առաջ Այնթապէն բերուած կոշտ գրասեղաններուն տեղ, աւելի արդիական և կոկիկ կահաւորումով օժտած են հաստատութիւնս: Գլխերօթիկներու բաժնին համար անցեալ տարուայ չէնքին երրորդ յարկն ալ վարձուած է, աշակերտներուն մօեղարգելներ հայթայթուած են, և գարձեալ զպրօցականներու կողմանէ նոր սեղան-

ներ և նոտարաններ շինուած են:

Ընդունուած նոր կանոնին համեմատ գոլէճի երկու կարգերուն խօսակցութեան լեզուն Ֆրանսերէն պիտի ըլլայ: Ուսանողները ընտրած են իրենց մարմնամարզական, ընկերային, գրական և կրօնական յանձնախումբերը, և սկսած են եռանդուն գործունէութեան:

ՊԷՅՐՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ամառնային եռամսեայ արձակուրդէն յետոյ Պէյրութ քաղաքի և հիւղաւանի երիտ. Գրիս. Զանից Աղջկանց և Մանչերու Ընկերութեանց վերաբացման հանդեսը տեղի ունեցաւ Հոկտ. 27, Կիրակի առաւօտ, ժամը 11 ին, հիւղաւանի Հայ Աւետ. Եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Տիար Իսմայիլեանէս Արզարեանի:

Ներկայ էին քաղաքի և հիւղաւանի Զանից Ընկերութեանց երկսեռ անդամները, հիւղաւանի հովիւ Վեր. Ե. Հատիտեան և Վեր. Կ. Հասէսեան և համակիր երիտասարդներ. եղան նուազ երգեցողութիւն և բանախօսութիւն:

Պր. Մանասէ Ծնորհօքեան բացատրեց Ընկերութեանց նպատակը, կոչումն ու պարտականութիւնը, ազնիւ և ուղղամիտ կերպով քննադատեց Ընկերութիւնները իրենց չորս տարուայ չըջանին անդամներուն մէջ հոգեւոր կեանք և շարժում ստեղծած չ'ըլլալուն համար, ապա մաղթեց որ անոնք ասկէ յետոյ աւելի գիտակցօրէն և կատարեալ համագլուխով շարունակեն հետապնդել իրենց առաջադրած վեհ իտէալին իրականացումը, անդամներուն նեշնչելով յոյս, սէր, հաւատք, հոգեւոր բարձր ու Աստուծոյ հաճելի և մարգոց ալ օրինակելի կեանք մը:

Ամէնէն վերջը օրուան նախագահը բնահրաւիրեց Տիար Պետրոս Յակօբեանը որ խօսք առնելով թուեց համաշխարհային կործանիչ պատերազմին յառաջ բերած չարիքները, ժողովուրդներու և մա-

նաւանդ երիտասարդներու մէջ Աստուծոյ մասին ստեղծած սխալ և անհիմն գաղափարներն ու հասկացողութիւնները, անոնց տխուր հետեւանքները, ծանրացաւ յեղափոխութեանց և ընթացողութեան յառաջ քերած անբաղձալի կացութեանց վրայ. սակայն միւս կողմէ ալ արախութիւն յայտնեց մաս մը երիտասարդներու մէջ Աստուածապաշտողի տեսնելուն համար, ինչպէս նաեւ եկեղեցիներուն երեւմեայ արհամարհուած երիտասարդ և երիտասարդուհիներու ուժը գնահատելուն համար: Յարգելի բանախօսը լաւ ըրած կ'ըլլար եթէ քիչ մը դանդաղ խօսէր:

Նուազը և երգեցողութիւնը գրեթէ յաջող էին, ուրախալի պարագայ մ'էր բոլոր բանախօսութեանց և երգեցողութեանց հայերէն լեզուով ըլլալը:

Հանդէսը վերջացաւ Վեր. Ե. Հատիտեանի աղօթքով, ներկաները գոհ և ուրախ տրամադրութեամբ բաժնուեցան եկեղեցիէն:

Պէյրուք

ԵՐՈՒԱՆԴ Լ. ԱՂԷԿԵԱՆ

ՄԱՀԳՈՅԺ

Այրի Տիկ. Մարիամ Մանուկեան, մայրը Վեր. Սիւսակ Մանուկեանի, 33 օրուան հիւանդութենէ մը վերջ իր մահկանացուն կնքեց Հոկ. Տին, իր զաւակին տունը, Հալէպ: Հանգուցեալը 84 տարեկան էր. բարի մայր մը եղած և ջերմեռանդ հաւատքով քրիստոնէական կեանք մ'ապրած էր:

Յաւով կ'իմանանք մահը Տիկ. Եղսա Սողիկեանի, կինը Եփրատ Գոլէճի հայերէնի փրօֆէսօր հանգուցեալ Տիար Կ. Սողիկեանի, իր փեսային Տիար Նշան Պէկեանի բնակարանը, Պընէէն, Հոկ. 26 ին, երեք շաբթուայ թոքային հիւանդութեան մը իբր արդիւնքը, 71 ամառներ բոլորելէ վերջ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Ծանօթութիւն. Հետեւեալ հանելուկներուն մէջ ՏՊԵԼ բառը պէտք է հասկնալ այսպէս—Թիւ մը կը դրէք մելանով, և ճակատին մեջանը չը յորցած թուղթը ծալլելով ձեր գրած թիւը կը տպէք, ու բնականաբար յառաջ կուգայ նոր թիւ մը որուն մէկ մասը ձեր գրած թիւն է, միւս մասը բացատրութեանս համեմատ նոյն թիւին երկրորդ տպագրութիւնն է: 2-րդ օրինակ եթէ գրէք 1 թիւը, ու տըպէք՝ կ'ըլլայ 11:

Հանելուկ Ա. Ո՞րն է այն թիւը՝ որ տպուելով 800 կ'աւելնայ:

Հանելուկ Բ. Ո՞րն է այն թիւը՝ որ տպուելով 8100 կ'աւելնայ:

Հանելուկ Գ. Ո՞րն է այն թիւը՝ որ տպուելով 1863 կ'աւելնայ:

Հանելուկ Դ. Ո՞րն է այն թիւը՝ որ տպուելով 163 կ'աւելնայ:

Հանելուկ Ե. Ո՞րն է այն թիւը՝ որ տպուելով բնաւ չի փոխուիր.

Ծանօթութիւն.—Իմ փոքրիկ ընթերցողիս օգնելու համար ըսեմ թէ այս հանելուկները շիտակ լուծողներուն մէջէն մէկ հատին (վիճակով) պարգեւ մը պիտի տանք: Եւ խօսիմ ուրիշները չլսեն:

Առաջին հինգ հանելուկներուն պատասխանը միեւնոյն թիւն է:

Հանելուկ 2. Ո՞րն է այն թիւը՝ որ տպուելով 5 կ'աւելնայ:

Հանելուկ 3. Ո՞րն է այն թիւը՝ որ տպուելով 150 կ'աւելնայ:

Հանելուկ 4. Ո՞րն է այն թիւը՝ որ տպուելով 10500 կ'աւելնայ:

Հանելուկ Բ. Ո՞րն է այն թիւը՝ որ տպուելով 8 կ'աւելնայ:

Հանելուկ Ժ. Ո՞րն է այն թիւը՝ որ տպուելով բնաւ չը փոխուիր:

صاحب الامتياز و مدير المسؤول

قنيس قره بت هاروتونيان